Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԷՆ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 5. Երևան -5 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 10.01.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 76 շահառուի Էրեբունի և Նուբարաշեն համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 56 դեպքի վարում 46 շահառուների համար (սոցիալական նպաստ համակարգում վերահաշվառման կազմակերպում - 38, աջակցող միջոցների ձեռք բերման կազմակերպում - 7, նոր անձնագրի ձեռք բերման կազմակերպում - 8, կենցաղային պայմանների բարելավման՝ գազօջախի ձեռք բերման կազմակերպում - 1, աղքատության վճարի վերահաշվառման կազմակերպում - 1, առողջական վիճակի բարելավման՝ աչքի վիրահատության կազմակերպում - 1):
  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 8 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ. անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն: https
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է 10 միջոցառում, որոնց մասնակցել է 11 շահառու:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 76 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման. սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 76 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 49 շահառուի համար պետական

պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 32 շահառու ուղեգրվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով: 5 շահառուի համար կատարվել է վիրահատում, 31 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 10 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում: Թվով 21 շահառուի համար կատարվել է ուղեգրերի ձեռք բերում՝ բուժհետազոտության կազմակերպում՝ պետպատվերի սահմաններում, 20 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ: 27 շահառուի համար կազմակերպվել է բժշկական մասնագիտական խորհրդատվություն:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրված նյութերի հղումները տեղադրվել են եռամսյակային հաշվետվություններում:

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրներ**ը**, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար.

- Էրեբունի համայնքը սպասարկող սոցիալական աշխատողը և բուժքույրերը մասնակցել են Եվրոմիության գրասենյակի կողմից «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կենտրոնական գրասենյակի կազմակերպած «Սթրես» թեմայով դասընթացին:
- Էրեբունի համայնքը սպասարկող սոցիալական աշխատողը մասնակցել է «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կենտրոնական գրասենյակի կողմից «Նոնենի» սոցիալական տանը կազմակերպված դասընթացին՝ «Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով:

Ձևաչափ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 74/76 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 73 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 5 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 71 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –0<br>Բ - 76 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 76 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 76 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 76 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 11 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 21 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն սննդի փաթեթի տրամադրում | 8<br>71 |

Կազմակերպության ղեկավար ___*Երվանդ Մխիթարյան*___ 10.01.2025թ.

[illegible]